# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4814-Ա « 09 » դեկտեմբերի 2024 թ.

ԿՈՄԻՏԱՍԻ ՊՈՂՈՏԱՅԻ Հ.56 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 88.6ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԸ ԵՆԹԱՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Ռոբերտ Եղյանի դիմումը՝ Կոմիտասի պողոտայի հ.56 հասցեում, վարձակալության իրավունքով իրեն տրամադրված 88.6քմ մակերեսով ոչ բնակելի տարածքը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.14062024-01-0175 վկայական/ ենթավարձակալության տալու թույլտվության մասին:

Նշված տարածքը երեք տարի ժամկետով վարձակալության իրավունքով տրամադրվել է Ռոբերտ Եղյանին, որի հիման վրա 07.06.2024թ. կնքվել է հ.3599 ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիրը:

Հաշվի առնելով ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի 2.3-րդ կետի 2.3.1 ենթակետը, ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 620-րդ հոդվածով.

1.Թույլատրել Ռոբերտ Եղյանին՝ Կոմիտասի պողոտայի հ.56 հասցեում գտնվող 88.6քմ մակերեսով տարածքը հանձնել ենթավարձակալության:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**